

Ա.ս. Սատրյան

ՀԱՅ ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ՊՈԵԶԻԱՅԻ ՍԿԶԲՆԱՎՈՐՄԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

1

Ռուսաստանի և Անդրկովկասի 20-րդ դարի սկզբների հասարակական-քաղաքական կյանքի զարգացման նոր էտապի բնութագիրը տվել է ընկեր Ստալինը «Պրոլետարների դասակարգը և պրոլետարների պարտիան» նշանավոր հոդվածում: Ընկեր Ստալինը նշում է, որ «անցել է այն ժամանակը, երբ համարձակ կերպով հռչակում էին՝ «միասնական և անբաժան Ռուսաստան»: Այժմ երեխան էլ գիտե, որ «միասնական և անբաժան» Ռուսաստան գոյություն չունի, որ նա վաղուց բաժանվել է երկու հակադիր դասակարգերի՝ բուրժուազիայի և պրոլետարիատի: Այժմ ոչ ոքի համար գաղտնիք չէ, որ այդ երկու դասակարգերի միջև մղվող պայքարը դարձել է այն առանցքը, որի շուրջը պտտվում է մեր ժամանակակից կյանքը»¹:

Իսկ «մինչև այժմ,— շարունակում է ընկեր Ստալինը,— այդ բոլորը դրժվար էր նկատել,— և այդ այն պատճառով, որ մենք մինչև այժմ պայքարի ասպարեզում տեսնում էինք միայն առանձին խմբեր, որովհետև պայքարում էին միայն առանձին խմբեր՝ առանձին քաղաքներում ու անկյուններում, իսկ պրոլետարիատն ու բուրժուազիան, որպես դասակարգեր, չէին երևում,— նրանց չժվար էր նկատել: Բայց ահա, միավորվեցին քաղաքներն ու շրջանները, պրոլետարիատի տարբեր խմբերը ձեռք մեկնեցին միմյանց, բռնկվեցին ընդհանուր գործադուլներ ու ցույցեր,— և մեր առջև բացվեց երկու Ռուսաստանների՝ բուրժուական Ռուսաստանի և պրոլետարական Ռուսաստանի միջև մղվող պայքարի հոյակապ պատկերը: Պայքարի ասպարեզ դուրս եկան երկու մեծ բանակներ,— պրոլետարների բանակը և բուրժուաների բանակը, և այդ երկու բանակների միջև մղվող պայքարն ընդգրկեց մեր ամբողջ հասարակական կյանքը»²:

Ռուսաստանի հասարակական-քաղաքական կյանքին տրված ստալինյան այս բնութագիրը լիովին վերաբերում է նաև Անդրկովկասին, որը, չնայած իր զաղութային վիճակին ու թերևս հենց այդ պատճառով, իբրև կրկնակի ճնշման ենթակա երկրամաս,— նույնպես՝ իր հասարակական-քաղաքական զարգացման ընթացքով կանգնած էր «երկու մեծ բանակների» հզոր բախման ճանապահին: Այստեղ՝ Անդրկովկասումն էլ այդ երկու բանակների միջև մղվող պայքարն ընդգրկեց մեր ամբողջ հասարակական կյանքը: Անդրկովկասում ևս այդ երկու դասակարգերի միջև մղվող պայքարը 1900—1901 թվականներից սկսած դառնում է այն առանցքը, որի շուրջը պտտվում էր ժամանակակից կյանքը:

1 Ի. Վ. Ստալին, Երկիր, հատ. 1, էջ 71:

2 Նույն տեղում, էջ 71 - 72:

Դարավերջում «սկսված տնտեսական ճգնաժամի պայմաններում, Ռուսաստանի բանվորական շարժման ազդեցության տակ և սոցիալ-դեմոկրատների ծավալած գործունեության հետևանքով Թիֆլիսում 1900—1901 թվականներին աճում է տնտեսական գործադուլների ալիքը, որոնք ընդգրկում են մեկ ձեռնարկություն մյուսի ետևից: 1900 թ. օգոստոսին ծավալվում է երկաթուղային արհեստանոցների և դեպոյի բանվորների վիթխարի գործադուլը: Այդ գործադուլին ակտիվ մասնակցում է Պետերբուրգից Կովկաս աքսորված Մ. Ի. Կալինինը, 1901 թ. ապրիլի 22-ին Թիֆլիսի կենտրոնում կազմակերպվում է մայիսմեկյան ցույց», որի կազմակերպիչն ու ղեկավարը Ի. Վ. Ստալինն էր¹:

Պատմական այդ նշանավոր իրադարձությունն իր արձագանքն ու գնահատականն ստացավ լենինյան «Իսկրա»-յում:

„Событие, бывшее в воскресенье 22 апреля (ст. стиля) в Тифлисе, является исторически-знаменательным для всего Кавказа. С этого дня на Кавказе начинается открытое революционное движение“, գրում էր լենինյան «Իսկրան» 1901 թվականին²:

Նույն «այդ տարիներին՝ «Մեսամե-Դասի»-ի ռեդյուցիոն փոքրամասնության ղեկավարությամբ, Ստալինի գլխավորությամբ իրականացվեց Վրաստանի բանվորական շարժման անցումը խմբակային նեղ պրոպագանդայից մասսայական քաղաքական ագիտացիայի: Դրանով էլ հենց Կովկասում ևս սկսվեց կենսագործվել սոցիալիզմի միացումը բանվորական շարժման հետ...»³:

Պատմականորեն նշանակալից այդ պրոցեսը տեղի ուներ նաև հայկական կյանքում: Դարավերջին ու դարամուտին սկսված, իր քնույթով ինտերնացիոնալ բանվորական շարժմանը մասնակցում էին նաև հայ բանվորները՝ հակառակ այն կատաղի դիմադրությանն ու արգելքներին, որ հարուցում էին հայ ազգայնական պարտիաները (դաշնակցականներ, հնչակյաններ և «սպեցիֆիկներ»), ամեն կերպ ջանալով հայ բանվորներին առանձնացնել համակովկասյան ու համառուսական ռեդյուցիոն շարժումից, ռեակցիոն նացիոնալիստական այն «տեսություն» համաձայն, թե իբր հայ պրոլետարիատին չի կարելի անջատել հայ հասարակությունից, թե՛ հայ պրոլետարիատը իր ցեղի հարազատ որդին է լինելու և այլն: Ընկեր Ստալինը՝ մերկացնելով հայ նացիոնալիստների «տեսություն» ու քաղաքական պրակտիկայի ռեակցիոն բնույթը, ցույց էր տալիս, որ հայ բանվորներն իրենց կենսական շահերի գիտակցությամբ բնականորեն արդեն միացած են վրացի, ռուս, ադրբեջանցի ու մյուս ազգերի բանվորներին և նրանց հետ միասին են մարտնչում ցարիզմի ու կապիտալիզմի դեմ: Հետևաբար հայ պրոլետարիատի «անջատումը» «հայ հասարակությունից» տեղի է ունենում ամեն քայլափոխում:

Այնուհետև, նկատի ունենալով հայ բանվորների ակտիվ մասնակցությունը Թիֆլիսի 1900 թ. օգոստոսյան գործադուլին, ընկեր Ստալինը հարցնում է. «Մի՞թե միավորված հայ պրոլետարիատը «չանջատվեց» հայ հասարակությունից», երբ նա 1900 թվականին (Թիֆլիսում) պայքար հայտարարեց հայ բուրժուազիային և քուրժուաբար մտածող հայերին:

¹ Թոսիֆ Վիսսարիոնովիչ Ստալին, Համառոտ կենսագրություն, էջ 14:

² „Искра“ 1902, № 22.

³ Թոսիֆ Վիսսարիոնովիչ Ստալին, Համառոտ կենսագրություն, էջ 15:

⁴ Ի. Վ. Ստալին, Երկեր, հատ. 1, էջ 44:

...նվ, վերջապես, մի՞թե հայ պրոլետարիատը կարող է «իր ցեղի հարազատ որդին» լինել, երբ այդ ցեղի մի մասը՝ հայ բուրժուազիան՝ սարդի նման ծծում է նրա արյունը, իսկ մյուս մասը՝ հայ հոգևորականությունը՝ բաքի նրանից, որ ծծում է բանվորների արյունը, սիստեմատիկորեն այլասերում է նրա գիտակցությունը¹։

Ընկեր Ստալինի այդ պատմական խոսքերով նշանավորվել է հայ պրոլետարիատի ռևոլյուցիոն զարթոնքը և մյուս ազգերի պրոլետարների հետ միասին նրա մղած համատեղ պայքարը ցարիզմի ու կապիտալիզմի դեմ, ըստ որում և «իր ցեղի» շահագործող, արյուն ծծող դասակարգի դեմ։

1900—1901 և 1902 թվականներին Թիֆլիսում տեղի ունեցած գործադուլներին ու մայիսմեկյան ցույցներին ակտիվորեն մասնակցել են հայ անվանի բանվորներ Դեդուշկան (Մելիք Մելիքյանը), Անուշավան Վարդանյանը, Արմենակ Նալչաչյանը և ուրիշներ։

Պատահական չէ, որ դրանցից առաջին երկուսը 900-ական թվականներին հանդես եկան նաև, որպես գրողներ՝ հայ պրոլետարական գրականության ներկայացուցիչներ՝ Դեդուշկան գեղարվեստական արձակի, Ան. Վարդանյանը՝ դրամատուրգիայի բնագավառում։

Թիֆլիսից հետո բանվորական ռևոլյուցիոն շարժման հզոր ալիքը տարածվում է նաև Անդրկովկասի մյուս արդյունաբերական կենտրոնները՝ ամենից առաջ Բաթում և Բաքու։ Հայտնի է Բաթումի առաջին խոշոր գործադուլը Մանթաշևի գործարանում՝ 1902 թ. հունվարին, ինդուստրիալ գործարանում՝ նույն տարվա փետրվարին՝ երկուսն էլ կազմակերպված ընկեր Ստալինի ղեկավարությամբ։ Թիֆլիսին ու Բաթումին արձագանքում է Բաքուն՝ նույն տարվա մայիսմեկյան հզոր ցույցով, որ կազմակերպել էր Բաքվի սոցիալ-դեմոկրատական կոմիտեն։ Մայիսմեկյան ցույցներին բանվորները երգում էին մի շարք ռևոլյուցիոն երգեր, որոնց թվում «Ինտերնացիոնալը», բանվորական «Մարսելյոզ»-ը, «Վարչավյանկան» և այլ երգեր, ինչպես նաև երգիծական բնույթի բանավոր կոլեկտիվ ստեղծագործություններ, ուղղված հայկական նացիոնալիստական, կոնտրռևոլյուցիոն պարտիաների դեմ։ Բաքվի 1902 թ. մայիսմեկյան ցույցի ականատեսներից մեկը՝ վեց տարի հետո իր հուշերում գրում է, որ Ռ. Ս. Դ. Բանվորական պարտիայի Բաքվի կազմակերպությունը «նախօրոք կազմակերպված բանվորներից ընտրել էր դրոշակակիրներ և ցույցը ղեկավարողներ։ Բացի դրանից ընտրել էր և մի երգեցիկ խումբ, որը ցույցի ընթացքում պիտի երգեր հեղափոխական երգեր»։ Ցույցի ժամանակ «երգեցիկ խումբը իր հերթին սկսեց երգել «Մարսելյոզ», «Վարչավյանկա», «Դուբինուշկա» և այդ օրին հատուկ մի երգ, որից մի քանի տող եմ դժբախտաբար միայն հիշում»։ Այնուհետև ականատեսը բերում է այդ երգից մի քառյակ՝ ուսեսերեն և հայերեն, որը վկայում է, թե երգը երգվել է երկու լեզվով էլ։ Բերված քառյակից երևում է, որ երգը ուղղված է դաշնակ-նացիոնալիստների դեմ, որոնք կոնտրռևոլյուցիոն դեր էին կատարում, հաճախ դիմելով խուլիգանական մեթոդների (հայհոյանք, ծեծ, սպառնալիք), խանգարում էին բանվորների ցույցը, ի պաշտպանություն կապիտալիստների «ցեղային»՝ դասակարգային շահերի։

¹ Ի. Վ. Ստալին, Երկեր, հատ. 1, էջ 44—45։

Ահա այդ քառյակը հայերեն լեզվով.

Ապրիլի քսանմեկին ամբողջ պարապետը լիքն է.

Հե՛, հե՛, հե՛յ Կովկաս, ամբողջ պարապետը լիքն է.

Դաշնակցականները լուրջով են, մեր եղբայրներին հայհոյեցին,
Հե՛, հե՛, հե՛յ Կովկաս, մեր եղբայրներին հայհոյեցին և այլն¹:

Որքան մեզ հայտնի է, սա առաջին ռևոլյուցիոն երգն է, որն իր բովանդակությամբ կապված է հայ կյանքում տեղի ունեցած սոցիալական-քաղաքական պայքարի հետ, ստեղծվել է բանվորական միջավայրում և երգվել է ռևոլյուցիոն ցույցերի ժամանակ:

Կարևոր է նկատի ունենալ, մանավանդ, այդ երգի հորինման ժամանակը՝ 1902 թվականը: Այդ փաստն ինքնին վկայում է, որ հենց դարասկզբին արտահայտված հայ բանվորների դասակարգային քաղաքական ինքնագիտակցության արթնացումը միաժամանակ ռևոլյուցիոն երգի պահանջ է առաջացրել: Իսկ այն, որ այդ երգը երգվել է ռուսերեն և հայերեն լեզուներով, վկայում է ռուս և հայ բանվորների հոգեհարազատության, նրանց եղբայրական ինտերնացիոնալ սերտ կապի, բուրժուազիայի դեմ մղված նրանց միասնական համատեղ պայքարի մասին:

Այս փաստերը վկայում են այն մասին, որ հայ բանվորների դասակարգային քաղաքական գիտակցության արթնացումը հենց սկզբից արտահայտվում է՝ վրացի, ռուս ու ադրբեջանցի բանվորների հետ միասին նրանց մղած միասնական պայքարում, ինչպես ցարիզմի, նույնպես և բուրժուազիայի դեմ:

Ժողովուրդների ռևոլյուցիոն բարեկամության, պրոլետարական ինտերնացիոնալիզմի գաղափարական այդ մթնոլորտում է, ահա, որ սկսվում է Հակոբ Հակոբյանի կյանքի ու գործունեության նոր շրջանը, երբ նա հանդես է գալիս ստեղծագործական նոր, ռևոլյուցիոն դավանանքով՝ պոեզիան, գրականությունը քանվոր դասակարգի ու աշխատավոր ժողովրդի ազատագրական պայքարին միացնելու և նրա հաղթանակի գործին նվիրվելու դավանանքով:

Հակոբյանի գործունեության այս շրջանն սկսվում է Անդրկովկասի կյանքում կատարված այն մեծ բեկման մոմենտին, երբ ծավալվող բանվորական շարժումը տարերայնությունից անցնում է գիտակցական, կազմակերպվածության ուղուն: Եվ դա տեղի ունեցավ շնորհիվ լենինյան-իսկրայական սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների, որոնք ծնունդ առան ու ամրապնդվեցին ընկեր Ստալինի ղեկավարությամբ՝ «Մարքսիզմի-լենինիզմի թշնամիների դեմ մղվող անհաշտ պայքարում»²:

Լենինյան «Իսկրայի» օրինակով ընկեր Ստալինի անմիջական ղեկավարությամբ հրատարակվում են ռևոլյուցիոն սոցիալ-դեմոկրատական առաջին պարբերականները՝ վրացերեն «Բրձոլա»-ն (1901—1902) և հայերեն «Պրոլետարիատ»-ը (1902), այնուհետև հաջորդաբար հրատարակվում են «Պրոլետարիատիս բրձոլա» (1903—1905) թերթը երեք լեզուներով (վրացերեն, հայերեն, ռուսերեն), «Кавказский рабочий листок», «Ախալի դրոբա» («Նոր

¹ Տե՛ս «Անիվ» ժուռնալ, 1908, № 9, էջ 5.

² Լ. Պ. Բեբիա, Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունների պատմության հարցի շուրջը, էջ 53:

ժամանակ» 1906—1907), «Մնատորի» («Լուսատու»), «Դրո» («Ժամանակ» 1907), «Կայծ», «Նոր խոսք» (1906), «Ախալի ցխովրեբա» («Նոր կյանք» 1906), «Бэкинский рабочий» (1906), «Կոչ-Դեվեթ» («Կոչ»—1906) հայերեն ու ազրբեջաներեն լեզուներով և մի շարք այլ պարբերականներ:

2

Հայ, վրաց և ազրբեջանական պրոլետարական գրականությունների սկզբնավորման ու ձևավորման պատմությունը սերտորեն կապված է բոլշևիկյան մամուլի այդ օրգանների գործունեության, նրանց մղած գաղափարական պայքարի հետ:

Անդրկովկասում պրոլետարական ուղղություն պոեզիայի ու գրականության սկզբնավորման գործում առաջնությունը պատկանում է վրացականին: Ստալինյան «Բրժոլա»-ի ու նրան հաջորդող վրացերեն մյուս բոլշևիկյան օրգանների էջերում է ծնվում վրացական ուղղություն պրոլետարական պոեզիան, որը ձևավորվում է դարասկզբի հինգ-վեց տարիներին:

Այդ գործում ամենից առաջ վճռական դեր է կատարել «Բրժոլա» թերթը: Նախած նրա կարճատև գոյությանը: Ընդամենը չորս համար լույս տեսնելուց հետո «Բրժոլա»-ն դադարում է: Բայց հենց այդ չորս համարներում տպագրված ուղղություն բանաստեղծությունների շարքով սկզբնավորվում է վրացական պրոլետարական պոեզիան¹:

«Բրժոլա»-ի 1-ին համարի խմբագրական հոդվածում («Խմբագրության կողմից») ընկեր Ստալինը տալով վրացերեն բանվորական այս «առաջին ազատ լրագրի» գործունեության ծրագիրը, ասում է, որ «վրացական բանվորական շարժման մեջ արդեն հասել է այն մոմենտը, երբ պարբերական հրատարակությունը ուղղություն աշխատանքի գլխավորագույն միջոցներից մեկն է դառնում»: Ընկեր Ստալինը նշում է, որ ուղղություն սոցիալ-դեմոկրատական բանվորական թերթի ամենաառաջին պարտականությունն է՝ որքան կարելի է մոտ կանգնել բանվորական մասսային, հնարավորություն ունենալ շարունակ ազդելու նրա վրա, լինել նրա գիտակից ու ղեկավար կենտրոնը: «...Թերթը պարտավոր է ընթերցողին ծանոթացնելու բոլոր սկզբունքային թեորիական ու տակտիկական հարցերին: Դրա հետ միասին թերթը պարտավոր է գլխավորելու տեղական շարժումը և պատշաճ կերպով լուսաբանելու յուրաքանչյուր դեպք, չթողնելով առանց պարզաբանման ոչ մի փաստ և պատասխանելով տեղական բանվորներին հուզող բոլոր հարցերին»: Իսկ հոդվածի վերջում ընկեր Ստալինը կոչ է անում «բոլոր պայքարող վրացի սոցիալ-դեմոկրատներին՝ ջերմ մասնակցություն ունենալ «Բրժոլա»-ի բախտին, ամեն կերպ աջակցել նրա հրատարակությանն ու տարածմանը և դրանով իսկ վրացերեն առաջին ազատ լրագիր «Բրժոլա»-ն դարձնել ուղղություն պայքարի զենք»²:

¹ Այս հատվածը գրելիս մենք մասամբ օգտվել ենք Լ. Ասատիանիի «Грузинская рабочая революционная поэзия 1901—1907» հոդվածի («Знамя» 1950, № 12) և Революционная поэзия 1890—1917 ժողովածուի («Библиотека поэта», малая серия) երկրորդ հրատարակությանը (1950) կցված Վաս. Կուրիլենկովի առաջաբանի («Большевистские традиции революционной поэзии») պարունակած նյութերից:

² Ի. Վ. Ստալին, Երկեր, հատ. 1, էջ 3—11:

Ստալինյան «Բրժոլա»-ն այգպիսի զենք է դառնում նրա էջերում տպագրված ստալինյան հոդվածների, ինչպես և այն բանի շնորհիվ, որ պրոլետարիատի ռևոլյուցիոն պայքարի գաղափարը թերթի էջերում արտահայտվում է թե մարտական հրապարակախոսության, և թե գեղարվեստական-բանաստեղծական խոսքի միջոցով: Առավել ևս ուշագրավ է այն փաստը, որ «Բրժոլա»-ի էջերից իրենք՝ բանվորները և ռևոլյուցիոն սոցիալ-դեմոկրատական ինտելիգենցիայի ներկայացուցիչներն են երգում պրոլետարիատի կյանքի, աշխատանքի և կռվի երգը:

Վրացական պրոլետարական պոեզիայի սկզբնավորումը ստալինյան «Բրժոլա»-ի էջերում նշանավորվում է Լադո Յաշվիլու (1872—1910) բուլղակյան պարտիայի անվանի գործիչ Միխո Բոչորիձեի, Իրոդոնե Եվդոշվիլու (1873—1916) և մյուս պոետների մարտական երգերով:

«Բրժոլա»-ի հենց առաջին (1901 թ. սեպտեմբերյան) համարում տպված Լադո Յաշվիլու «22-ն ապրիլի» վերնագրով բանաստեղծությունը (Շվարիչ ծածկանունով) վրացական պրոլետարական պոեզիայի գարնան ծիծեռնակն է: Դա՝ 1901 թ. Բիֆլիսի մայիսմեկյան պատմական ցույցի «բանվոր դասակարգի հերոսականության օրվա» մարտաշունչ արձագանքն է և կոչ՝ «Ժողովուրդների եղբայրության, նրանց սրտագին բարեկամության» մասին, տոգորված ապագա «ընդհանրական երջանկության» նվիրական գաղափարով: Բանաստեղծն իր երգը նվիրում է բոլոր նրանց, ով՝

... Отдавшим себя постоянно
В жертву грядущему благу собратьев,
Не испугавшимся гнева тиранов,
Зная поднявшим всеобщего счастья.

Зная единства, свободы счастливой,
Братства народов, их дружбы сердечной.
Зная, несущее в мир справедливость,
Всею возвещая о правде извечной.

Зная, несущее миру свободу,
Зная, несущее в мир справедливость,
День возвещая, когда все народы
Жить станут жизнью свободной, счастливой¹.

«Բրժոլա»-ի 2—3-րդ միացյալ համարում լույս են տեսել երկու նոր բանաստեղծություն հետևյալ վերնագրերով. «Товарищам» («Մեք», 1901 թ., «Метехский замок» ստորագրությամբ) և газета «Брджола» (x ստորագրությամբ): Երկուսն էլ համակված են պրոլետարիատի ռևոլյուցիոն պայքարի պաթոսով ու գալիք հաղթանակի վառ հավաստով: Դրանցից առաջինում ասված է՝

«Вновь борьба! Внимай товарищ!
Разве сломит плен героя?

¹ «Революционная поэзия 1890—1917», 1950, стр. 132—133.

Нет! Он мужество и бодрость
В каждом узнике удвоит.

... Мы—глашатаи свободы,
Мы бороться не устанем
До тех пор, покаместь сердце
Биться в нас не перестанет.

... Так вперед, пока повсюду
Голос наш не загрохочет
И пока не закалится
Каждый мускул у рабочих.

... День наступит, о котором
Говорит нам наше знамя.
Все рабочие, смыкайтесь
Для победы над врагами!¹

Մյուս բանաստեղծությունը, որ նվիրված է «Բրձոլա» թերթին, նախ տալիս է ստալինյան մարտական օրգանի ցայտուն բնութագիրը:

„Ты одна, одна из многих,
Что о правде говоришь—
И народ наш угнетенный
Поднимаешь и бодришь“.

Բանաստեղծն այնուհետև կոչ է անում թերթին, որ նա, թե՛ ճշմարտացիորեն պատկերի ճնշված ու տանջված ժողովրդի կյանքի և թե՛ միաժամանակ լուսավորի ժողովրդին ու որպես մարտի ղեկավար ոտքի հանի, պայքարի կոչի նրան ընդդեմ «բռնակալ-դահճի», հանուն ազատության.

„Брдзола“, будь трубой призывной,
Мрак ночной вокруг разрой.
Подними порабощенных
И уничтоженных людей.

Трон разбей, залитый кровью,
Сбрось тирана палача!
Уничтожим строй проклятый,
Тот, что дорог палачам!

Дай увидеть нам героев,
Что идут в победный бой,
На знаменах чьих, как светоч,
И свобода и любовь!²

¹ „Революционная поэзия 1890—1917“, 1950, стр. 134—135.

² Նույն տեղում, էջ 136—137:

«Բրժուան» իր առաջին համարից սկսած տպագրում է նաև ռուսերենից վրացերեն թարգմանված ռեուլյուցիոն երգերը: Թերթի առաջին համարում Հաղո Յաշվիլու (Շվաբիշ) վերոհիշյալ բանաստեղծության հետ միասին, տպված է նաև ռուս ռեուլյուցիոն դեմոկրատ բանաստեղծ Մ. Ի. Միխայլովի (1829—1865) «Смело, друзья, не теряйте бодрость в неравном бою», նշանավոր երգը՝ ռուս ռեուլյուցիոն-դեմոկրատների հիմնը, ինչպես նաև «Մարտելոգ» ու «Վարշավյանկա» հայտնի ռեուլյուցիոն երգերը, որոնք հետագայում, ի թիվս այլ երգերի, Հակոբյանը նույնպես ռուսերենից թարգմանում է հայերեն:

«Բրժուա»-ի բանաստեղծություններից մի քանիսը անմիջապես արձագանքն են ընկեր Ստալինի՝ նույն թերթում տպված մարտական հոդվածների:

Այսպես, օրինակ, թերթի առաջին համարի «Խմբագրության կողմից» հոդվածում ընկեր Ստալինն ասում է, որ «Բրժուա»-ն պետք է «ժամանակին կոչ անի վրացական բանվորներին կռվի դաշտ դուրս գալու» (հ. 1-ին, էջ 10):

Ստալինյան այդ մտքի ուղղակի արձագանքն է «Բրժուա»-ում տպված մի բանաստեղծություն, որի վերնագիրն է «Выступим, братья, на поле брани» (բանաստեղծությունն սկսվում է հետևյալ պաթետիկ քառյակով.

Поднимем победное красное знамя,
И на врага в наступление грянем!
Долой царя! Долой царедворцев!
Выступим, братья, на поле брани!

«Բրժուա»-ի ստալինյան տրադիցիան հետևողականորեն շարունակում են «Պրոլետարիատիս բրժուա»-ն (1903—1905), այնուհետև «Ախալի դրոնբա»-ն (1906—1907), «Դրոն»-ն (1907), «Ախալի ցխովրեբա»-ն (1906), «Չվենի ցխովրեբա»-ն (1906), «Մնատոբին»:

Բոլշևիկյան այդ պարբերականներում ընկեր Ստալինի նշանավոր հոդվածների հետ միաժամանակ, տպագրվում են նաև վրաց պրոլետարական պոետների մարտական բանաստեղծությունները, որոնք տոգորված են բանվոր դասակարգի պայքարի ու հաղթանակի ստալինյան գաղափարներով: Այդ պոետներից ամենանշանավորը՝ Իոդդիոն Եվդոշվիլին (1873—1916) է, որի ստեղծագործությունը («Ներոն», «Նվեր», «Սրտագին ընկեր» և այլն) խորապես համակված է ռեուլյուցիոն կռվի պաթոսով, Անդրկովկասի ժողովուրդների եղբայրության գաղափարով:

Եվդոշվիլին բանվորական շարժման ակտիվ մասնակիցներից է: Նրա մարտաշունչ բանաստեղծությունները 900-ական թվականներին և մանավանդ 1905—1907 թթ. տարածվում էին, որպես ռեուլյուցիոն ագիտացիայի ղեկ:

Այդպիսով վրացական պրոլետարական պոեզիան ծնունդ առավ «Բրժուա»-ում և նրան հաջորդած բոլշևիկյան մամուլի մյուս օրգաններում, բանվորական ռեուլյուցիոն շարժման բուռն վերելքի ընթացքում, ընկեր Ստալինի գլխավորությամբ Վրաստանի ու Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունների մղած գաղափարական պայքարի բարերար ազդեցությամբ:

Պատմական ու քաղաքական նույն իրադրության մեջ է սկզբնավորվում ու ձևավորվում նաև հայ պրոլետարական պոեզիան: Ծիշտ այնպես, ինչպես որ

վրացական¹ պրոլետարական պոեզիան ծնունդ առավ ու ձևավորվեց բոլշևիկյան մամուլում, հայ պրոլետարական պոեզիայի ու գրականության սկզբնավորումն էլ օրգանապես կապված է հայերեն իսկրայական բոլշևիկյան մամուլի օրգանների («Պրոլետարիատ», «Պրոլետարիատի կոիվ», «Կայծ» և այլն) պատմության հետ:

3

900-ական թվականների սկզբին Հակոբյանի հոգեկան-գաղափարական վերափոխումը խթանող հանգամանքներից էր նրա առաջին հանդիպումն ու ծանոթությունը Ստ. Շահումյանի հետ: Այդ տեղի է ունեցել 1902 թ. մայիսի 25-ին² Ղ. Աղայանի գրական գործունեության 40-ամյա հոբելյանին, երբ Շահումյանը հանդես է գալիս մի ճառով՝ Ռիգայի Պոլիտեխնիկական ինստիտուտի ռեկտուցիոն ուսանողության անունից: Բայց մինչ այդ էլ Հակոբյանը լսած է եղել Շահումյանի մասին:

«Ես նրան ճանաչում էի շատ վաղուց, երիտասարդական գաղտնի խմբացույթություններում շատ էին խոսում նրա մասին և ասում՝ «կա մի ուսանող Շահումյան՝ օժտված հեղափոխական մեծ ընդունակություններով»³ — գրում է Հակոբյանն իր հոդվածներից մեկում: Այն հանգամանքը, որ նա «շատ վաղուց» էր լսել բոցաշունչ ռեկտուցիոնների մասին, այս անմիջական հանդիպումը խորը, անջնջելի տպավորություն է թողնում Հակոբյանի վրա՝ խթանելով նրա հոգեկան գաղափարական վերափոխումը ռեկտուցիոն ոգով:

Հակոբյանը գրում է, որ ինքը նույն (1902) թվականին ծանոթանում է Ջախարի Չոբրիշվիլու, Դեդուշկա Մելիքի (Մելիք-Մելիքյան) հետ և վերջինիս հետ միասին սկսում է մասնակցել բանվորական խմբակների հավաքույթներին պրոպագանդիստական աշխատանք կատարելու հանձնարարությամբ:

1903—1904 թթ. Հակոբյանն անձամբ ծանոթանում է նաև Բոգդան Կնունյանցի, Միխայիլ Յիսակայայի, Ստ. Շահումյանի, Սուրեն Սպանդարյանի, Կամոյի հետ և նրանց ռեկտուցիոն միջավայրի, բոլշևիկյան մամուլի ու մարքսիստական գրականության ազդեցությամբ ներգրավվում է ռեկտուցիոն ընդհատակյա գործունեության մեջ:

Հակոբյանը ակտիվ մասնակցություն է ցուցաբերում հայերեն լեզվով ռեկտուցիոն ընդհատակյա պրոկլամացիաների հրատարակման գործին, ռուսերենից հայերեն թարգմանելով այդ պրոկլամացիաները և ռեկտուցիոն երգեր, որոնք տպագրվում ու տարածվում էին Անդրկովկասի բոլոր հայաբնակ վայրերը:

Հակոբյանն իր հուշերում պատմում է, որ 1902 թվականին Թիֆլիսի դեպույի հայ բանվորները խնդրել են իրեն՝ թարգմանել «Մարսելյոզը». նա այդ հանձնարարությունը կատարում է հաջողությամբ: Նույն այդ թվականին «Մարսելյոզ»-ը տպվում է թուրքիկներով ու հազարավոր օրինակներով տարածվում թե՛ Թիֆլիսում, և թե՛ գավառներում:

«Սա եղավ իմ՝ սոցիալ-դեմոկրատական կուսակցությանը հարելու նա-

¹ Այդ հանդիպման մասին Հակոբյանը խոսում է նաև Ղ. Աղայանի մահվան 25-ամյակի առթիվ գրած հոդվածում (տես «Գրական թերթ», 1936, 11/VII, № 18):

² «Պրոլետար», Լենինի Շահումյանի նահատակման 3-ամյա տարեդարձին (գծեր նրա հեղափոխական գործունեությունից), «Կարմիր աստղ», 1921, № 155:

խերգաճքը 1902 թվականին, գրում է Հակոբյանը. ... Ուրախությունս և եռանդիս չափ չկար, երբ իրար ետևից գիշերները թռուցիկներ էի թարգմանում մինչև լուսաբաց ու մյուս օրը տեսնում տպված երեկոյան մթին, երբ թևի տակ դրած, դեռ տպագրական ներկի թարմ քույրը վրան բերում էր գաղտնի տպարանի գրաշարը:

Որսկան բազենների նման իսկույն վրա էինք տալիս, թափվում էինք թռուցիկների վրա՝ ես, Թագուհի Մելիք-Շահնազարյանը (որը ղսվեց 1905 թ. աղետալի կոտորածի ժամանակ՝ օգոստոսի 29-ին քաղաքային Դումայի մոտ) ու տարածում էինք երեկոները՝ գործակատարներին, ցերեկը՝ բանվորներին՝ տներում, գերեզմանատներում և այլն:

Այստեղ էր, որ հանդիպում էի մեր առասպելական Կամոյին»:

Այդպիսով, Հակոբյանը օրեցօր ավելի որոշակիորեն ու հաստատորեն կողմնորոշվում է դեպի բանվորական շարժումը, դեպի ռևոլյուցիոն սոցիալ-դեմոկրատիան՝ բոլշևիզմը:

Այդ տարիներից սկսած, նրա գրական-ստեղծագործական կյանքը օրգանապես կապվում է նրա հասարակական-քաղաքական ռևոլյուցիոն գործունեության հետ:

* * *

900-ական թվականների սկիզբը, շատ փոքր ընգմիջումներով, անցման շրջան լինելով Հակոբյանի ստեղծագործական կյանքում, միաժամանակ իրար հետ օրգանապես կապում է նախորդ և հաջորդ շրջանները: Այդ տարիների նրա ստեղծագործության մեջ կան նախորդ շրջանի (90-ական թվականների) մոտիվներ, բայց գերաճած ու նոր իմաստավորում ստացած մոտիվներ, որոնցով բանաստեղծն արձագանքում է հասարակական-քաղաքական նոր երևույթներին, համադեմոկրատական և պրոլետարական ռևոլյուցիոն պայքարին՝ ընդդեմ ցարիզմի:

Հասարակական պայքարի նոր պայմաններում Հակոբյանը նորից անդրադառնում է պոետի սոցիալական կոչման հարցին: Դեռ 90-ական թվականների սկզբին, երիտասարդ բանաստեղծը Նադսոնի խոսքերով երգվել էր՝

«Եվ ես բողոք չարություն դեմ

Դարձրի ինձ դավանանք»¹:

Եվ ապա 90-ական թվականների վերջերին ձևակերպվել էր այդ դավանանքը «Մեր ցավը մեծ է» բանաստեղծությամբ, որով բանաստեղծը կոչ էր անում՝

«Տոկանք և տանենք ամբոխի ցավը,

Մինչև կհասնի աշխարհի լավը»:

Եվ հանուն «աշխարհի լավ» օրվա գալիքի, ասում է բանաստեղծը՝

«...Վառ երգի հրով բովենք, դարբենք

Թշվառի սիրտը, լքյալի հոգին»,

¹ Հ. Հ ա կ ո բ յ ա ն, Բանաստեղծություններ, Թիֆլիս, 1899, էջ 48:

Որպեսզի «ընդմիշտ ամրանա» «տանջված ամբոխի սիրտը» ու «գաղթի ցավերին դիմանա»¹։

Ամբոխ ասելով՝ Հակոբյանը հասկանում է բուն աշխատավոր ժողովուրդը — բոլոր շահագործվողներն ու ճնշվածները միասին վերցրած։

Հակոբյանը այժմ ավելի խորն է գիտակցում իր կապը «տանջված ամբոխի» հետ։ Այժմ նրան ավելի է մտահոգում բանաստեղծի — գրողի հասարակական կոչման ու դավանանքի հարցը, որին նա նորից ու նորից անդրադառնում է՝ ավելի որոշակի դարձնելու իր դիրքը։ Այդ հարցին է նվիրված «Ամբոխի կոչը» (1902 թ.)։

«Ամբոխը» կոչ է անում պոետին, իր երգը նրա ցավից հյուսելու, ընկերանալու նրա սրտի հետ, որ նա «թեթևանա հոգսերից»։ Բանաստեղծը գիտակցում է, որ ամբոխի-ժողովրդի համար այլևս՝ «վիշտը շոյող ու փայփայող երգը դարձավ ձանձրալի», և «մխիթարող նվազն էլ չէ՝ ցանկալի»։ Նա կոչ է անում՝ պասսիվ վշտակցության ու մխիթարանքի փոխարեն՝

Երգիր դու մեզ բուռն ցայտմամբ
Սրտի բողոքն անմեղի.
Նշավակի՛ր անզուսպ ցասմամբ
Բռնությունը ուժեղի՛²։

Այս մոտիվն, իհարկե, բոլորովին նորություն չէր Հակոբյանի համար, բայց նույն այդ մոտիվը նոր իմաստ ու նշանակություն էր ստանում հասարակական-քաղաքական կյանքի նոր պայմաններում, ցարիզմի դեմ ծավալվող ռևոլյուցիոն պայքարի իրադրության մեջ։

«Նշավակի՛ր անզուսպ ցասմամբ
Բռնությունը ուժեղի» —

Այս մարտաշունչ խոսքերը հնչում էին որպես կոմի կանչ, մարտակոչ՝ ցարական բռնության դեմ, որպես ռուսական համադեմոկրատական ռևոլյուցիոն շարժման արձագանք հայկական պոեզիայում։

Հակոբյանի «Ամբոխի կոչի» մոտիվը զուգահեռաբան է «Смело, товарищи» և «Смело, друзья идем вперед» հայտնի ռևոլյուցիոն երգերի հեղինակի՝ Լեոնիդ Ռադինի մի այլ բանաստեղծությանը՝ «Снова я слышу родную „Лучину“ վերնագրով՝ գրված 1898 թ. վյատկայի ձանապարհին։ Երկու դեպքում էլ արտահայտված է պոետի նույն ապրումը ժողովրդական վշտի նկատմամբ և նույն վերաբերմունքը։ Եթե Հակոբյանն ասում է, որ այլևս «ողբ ու լուց մխիթարող նվազն էլ չէ ցանկալի», ռուս ռևոլյուցիոններ պոետը նույն ապրումն ունենալով, գրել է.

„Полно! Довольно про горе ты пела...
Прочь этот грустный, унылый напев,
Надо, чтоб песня отвагой гремела,
В сердце будила спасительный гнев!«³

¹ Հ. Հակոբյան, Բանաստեղծություններ, Թիֆլիս, 1899, էջ 79—80։

² Հ. Հակոբյան, «Աշխատանքի երգեր», 1906, էջ 56, «Ամբոխի կոչը»։

³ „Пролетарские поэмы“, т. I, стр. 329.

Իհարկե, ինչպես շարունակության մեջ, նույնպես և բանաստեղծության ամբողջության մեջ է. Ռադինի մոտ շատ ավելի որոշակի և ուժգին է հնչում ռևոլյուցիոն երգչի ձայնը, քան Հակոբյանի «Ամբոխի կոչ»-ում: Բայց այնուամենայնիվ նկատելի նմանությունը շատ կարևոր է Հակոբյանի ստեղծագործական իգեական զարգացման տենդենցը որոշելու տեսակետից:

Իսկ այդ տենդենցն ուղիղ գծով ու հաստատորեն զարգացավ դեպի պրոլետարական ռևոլյուցիոնականությունը: Դարասկզբի առաջին տարիներին, երբ դեռ չէր սկսվել ռուսական առաջին ռևոլյուցիան, Հակոբյանն՝ իր արտահայտությամբ ասած՝ «կորած ճշմարտություն էր որոնում», իսկ ռևոլյուցիայի անմիջական նախօրեին, նա այլևս չի տատանվում իր որոնման մեջ, այլ հաստատուն քայլերով գնում է. դեպի գործարան, պրոլետարիատի մոտ, համոզված, որ այդ է «աշխարհի լավ օրվա» միակ հուսալի ուղին:

Ականջ դնելով «ամբոխի կոչին»՝ ժողովրդական վշտի ու բողոքի երգիչը ճշմարտություն է փնտրում և տեսնում է սակայն, որ տիրապետող մռայլ խավարի մեջ ամենքը

«Ման են գալիս ճշմարտության,—
Բայց չեն գտնում տակավին»¹:

4

Շարունակելով «կորած ճշմարտության» տառապագին որոնումները, բանաստեղծը համոզվեց, որ փրկարար ճշմարտությանն հասնելու համար հին ուղիներն անհույս են, ուրեմն պետք է նոր ուղի փնտրել ու գտնել: Եվ ահա, ռևոլյուցիայի անմիջական նախօրեին Հակոբյանը կանգնում է դեպի որոնող ճշմարտությունը տանող ճիշտ հանապարհի վրա, երբ հաստատորեն մտնում է գործարան և իր «երգը հյուսում» գործարանային կյանքի ու աշխատանքի, հայկական պոեզիայի համար մինչ այդ անծանոթ հնչյուններից, որոնք այնուհետև կախարհում և ամբողջապես գրավում են «Նամուս ու ղեյրաթի» երգչին:

Եվ երբ ականջ դրած «ամբոխի կոչին» «կորած ճշմարտությունը» որոնելիս, պոետը նորից մտավ արդյունաբերական քաղաքի գործարանը, նա այժմ լսեց «մուրճ ու սալի» աշխատանքային երգը, միացած բանվորի դասակարգային կռիվի կոչերին: Այնուհետև տեղի է ունենում նրա հոգեբանական ու գաղափարական ռևոլյուցիոն վերածնունդը: Նա այժմ կախարհվում է ոչ միայն բանվորի գործարանային աշխատանքի «դյութող հնչյուններով», այլև նրա կռվի կանչերով, որոնցից այնուհետև նա հյուսեց իր նոր երգերն ու պոեմները:

Այս իմաստով 1904 թվականը նշանակալից է Հակոբյանի համար, թե՛ որպես հասարակական-քաղաքական գործչի և թե՛ որպես ստեղծագործողի:

Այդ թվականին նա մտնում է Կոմունիստական պարտիայի շարքերը և հենց նույն տարվանից էլ նա իր ստեղծագործության մեջ անդրադարձնում է բանվոր դասակարգի կյանքը, աշխատանքն ու պայքարը: Այդ տեսակետից «Կաթսավար» (դրված 1904 թ.) բանաստեղծությունը բնութագրական է Հակոբյանի համար: Նրանում կա կապիտալիստական գործարանի ներքին կյանքի ռեալիստական զգացումը:

«Կաթսավար»-ն իր բովանդակությամբ հիշեցնում է Հակոբյանի ժամանակակից ռուս պրոլետարական պոետ Ա. Բոգդանովի «Тягабод» բանա-

¹ «Տարազ», 1903, № 12, է. Հակոբյան, «կորած ճշմարտություն»:

ստեղծությունը¹։ Բայց դա ազդեցություն չէ, այլ զուգահեռություն, որ արժեքավորում է Հակոբյանի ստեղծագործությունը։

Կապիտալիստական գործարանը և բանվորի վտանգալից աշխատանքն ու ողբերգական վիճակը շատ վաղուց էր ծանոթ Հակոբյանին։ Չէ՞ որ նա գեոտաս տարի առաջ ընդարձակ հոդված է գրել² բանվորների աշխատանքի ապահովագրության հարցերի մասին՝ բերելով գործարանային սարսուղացիչ աղետների բազմաթիվ փաստեր։

Սակայն այն ժամանակ գործարանը և բանվորի կյանքն ու աշխատանքը Հակոբյանի համար դեռ բանաստեղծական մտքի ու ոգևորության օբյեկտ չէին։

Տաս տարի հետո միայն Հակոբյանի ստեղծագործական ներշնչման հիմնական աղբյուրը և գլխավոր հերոսը դարձավ գործարանային բանվորն իր աշխատանքով ու պայքարով, իր վշտերով-հոգսերով ու մեծ իդեալներով։

«Կաթսավարն» ահա, Հակոբյանի ստեղծագործական կյանքի մեծ բեկման հաստատուն սկիզբն է և նրա հետագա զարգացման ուղենիշը։

Հակոբյանի նույն տարվա բանաստեղծություններից բնորոշ է «Ծրանի նորան» ոտանավորը, որ ցայտուն գծերով պատկերում է բուլշևիկ ռևոլյուցիոնների հոգեկան կերպարը։ Դա հեղինակի զարգացման նոր էտապի հասարակական-գաղափարական դավանանքի բանաստեղծական ձևակերպումն է։ Ումն է «երանի» տալիս պոետը, — «նորան, ով մանուկ օրից վիշտն ու զրկանքն է համարել խնջույք, ով փարթամ կյանքի շքեղ կենցաղից չի էլ զգացել երբեք մի հաճույք»։ «Նորան, ով բյուր վշտերի սպիներ ունի սրտի ծալքերում»։

Ով ամեն մի վերք, ամեն մի սպի
Վաստակել է բիրտ մաքառման կովում...
Սիրում եմ կոիվ ընդդեմ բռնության,
Կովի մեօն է լոկ իմ անդորոթյուն³։
Կովեցեք և դուք գոհեք մաքառման,
Կովով պիտ գտնեք դուք երջանկություն։

«Կաթսավարը» և «Ծրանի նորան» բանաստեղծությունները՝ Հակոբյանի կյանքի ու գործունեության նոր, ռևոլյուցիոն շրջանի սկզբնավորման առաջին նշանաձողերն են։

Բացի բանաստեղծություններից, կա և մի երրորդը՝ դարձյալ մի անմեղ վերնագրով՝ «էսքիզներ», ուր զգացվում է Գորկու «Բազեի երգի» անմիջական արձագանքը։ Պատկերված է «Կովասեր բազեի պտույտը անհուն եթերի ծովում», ուր որ՝

«Ամպերը՝ ճայթող կատաղի շեշտով
Հուր ու կայծակի կոիվ են մղում»։

Վերահաս վտանգն զգալով «կովասեր բազեն», ահա, սլացավ է՛լ ավելի վեր, հպարտ ու հանդարտ՝

«Արհամարհելով և՛ վտանգ, և՛ վախ...»։

¹ Տես՝ Ալ. Богданов, Песни подпольщика, 1927, стр. 73.

² Հ. Հակոբյան, Բանվորների ապահովացումն Ռուսաստանում դժբախտ դեպքերից («Մուրճ», 1894, № № 5, 6, 7—8)։

³ Այս տողի ընդգծումը՝ բնագրում տես «Աշխատանքի երգեր», 1906, էջ 9։

Բայց խիզախ բաղեն միայնակ է իր թոռի մեջ, ծվ ահա շուտով՝

«Ամպերը ահեղ մռնչումներով
ծտեից ընկան հալածանք տալով,
Ու կես ճանապարհ... լսվեց մի հառաչ
Բազեն ընկած էր իր քունի առաջ...»¹

Այս պատկերներում ակնհայտ է գորկիական մոտիվի առկայությունը։ Ռեալիզմի փոթորկի կանխազգացման արտահայտությունն է դա, որը մարմնավորվել է «կռվասեր բազեի» խիզախ թոռի ու նրա հերոսական անկման ալեգորիկ պատկերով։

Արդեն բարձրանում էր ռեալիզմի իններորդ ալիքը. Հակոբյանի մուսան «կռվասեր բազեի» թևերով ճախրում էր այդ ալիքի վրա, պատրաստ լինելով վերահաս փոթորկին դիմավորելու թևաբաց՝ «արհամարհելով և՛ վտանգ, և՛ վախ...»։

Իր իմաստով «կռվասեր բազեի» խիզախ թոռի այդ ալեգորիկ պատկերին է առնչվում նաև «Գարնանամուտին» բանաստեղծությունը՝ գրված նույն 1904 թվականին։ Շուտով անցնող մահաշունչ ձմեռվա և կենսաբեր գարնանամուտի հակադիր ալեգորիկ պատկերներում արտահայտված է ռեալիզմի պոետի վառ օպտիմիզմը՝ տիրող հասարակական-քաղաքական «խորին ձմեռվա», այսինքն՝ ցարիզմի անխուսափելի վերացման, հասարակական կյանքի վերահաս գարնան, այսինքն ռեալիզմի հաղթանակի հավատով։

«Գարնանամուտին» բանաստեղծությունը արժեքավոր է ոչ միայն իր այդ գաղափարական իմաստով, այլև իր արվեստով։

Բանաստեղծը կենսազվարթ տրամադրությամբ և գեղեցիկ ու իմաստալի պատկերավորությամբ նկարագրում է գարնանամուտը.

«Ձմեռ է խորին... Ցեղերի տակին
Հանգիստ են առնում հացահատիկներ,
Ննջում է արմատն հեզ մանուշակի,
Նիրհում են ցամքած ծառ ու ծաղիկներ։

Ձմեռ է խորին... Բայց և այս կանցնի.
Ձյունը կը հալչի, հողը կազատվի
Խիստ կապանքներից, արտը եղյամից,
Սերմը իր ճնշող հողաշերտերից։

Կը գա գարունը և ջերմ արևից
Սերմերը նոր ուժ, նոր հյութ կստանան.
Հողաթումբերի մեջքը կը ծռեն
Ծվ նրանց տակից հույսեր կը ծլեն։

...Օ՜, պատրաստ լինենք այդ օրին և մենք,
Նրա գալուստը պատվով ընդունենք...
Ողջո՞ւյն քեզ, գարուն, պսակ բնության,
Անսպառ աղբյուր ոգևորության»²։

¹ Հ. Հակոբյան, «Աղյուստանքի երգեր», 1908, էջ 48, «Էսթրիդներ»։

² Նույն տեղում, էջ 42—43։

Սովորական գարնան մասին է, «բնության պսակի» գայտյան մասին: Ակնհայտ է, որ՝ ոչ, անգամ եթե բանաստեղծության գրության ժամանակն էլ իսկապես գարնանամուտի նախօրյակը եղած լինի: Գարնանամուտի փոխաբերությամբ պոետը փորձել է տալ և հաջողությամբ տվել է երկրի հասարակական-քաղաքական կյանքի ռեոլյուցիոն վերափոխման բանաստեղծական մի պատկեր: Ինքը՝ Հակոբյանը խորապես ապրելով այդ վերափոխման կանխազգուշացումը, ոգևորությամբ կոչ է արել՝ «պատրաստ լինել այդ օրին», «ներա գալուստը պատվով ընդունելու»:

Եվ իրոք, Հակոբյանի ռեոլյուցիոն շրջանի ստեղծագործական կյանքի ամենաբնորոշ գծերից մեկն այն է, որ նա իր զարգացման մեջ քայլ առ քայլ, էտապ առ էտապ անդրադարձել է հասարակական-քաղաքական պայքարի, պրոլետարիատի ռեոլյուցիոն կռիվի ընթացքը՝ նրա տարերային սկզբնավորությունից և առաջին մեծ գրոհից սկսած մինչև նրա հաղթանակը՝ պրոլետարիատի դիկտատուրայի հաստատումով ու սոցիալիստական մեծ շինարարության ծավալումով:

5

2. Հակոբյանի բուն ռեոլյուցիոն գործունեությունը, թե՛ որպես գրողի և թե՛ որպես հասարակական դորժի, սկսվում է 1904 թվականից, այն ժամանակվանից, երբ նա որպես բոլշևիկ սերտորեն կապվեց սոցիալ-դեմոկրատական պարտիական մամուլի հետ:

Առաջին պարբերականը, որի հետ կապվում է Հակոբյանը, դա՝ «Պրոլետարիատի կռիվ» (սկզբում՝ «Պրոլետարիատ») թերթն է՝ «օրգան կոմկասյան Սոցիալ-Դեմոկրատական Բանվորական կազմակերպությունների Միության» (ինչպես այդ գրված է նրա ճակատին), լենինյան-իսկրայական երկրորդ անլեգալ լրագիրն Անդրկովկասում, որ հրատարակվում էր Թիֆլիսում վրացերեն («Պրոլետարիատիս բրձուլա») հայերեն և ռուսերեն («Борьба пролетариата» լեզուներով, ընկ. Ի. Ստալինի, Ալ. Մուլուկիձեի և Ստ. Շահումյանի ղեկավարությամբ¹): Նա շարունակում է իր նախորդի՝ «Պրոլետարիատ»-ի գործը և «Искра»-ի ու «Բրձուլա»-ի հետևողությամբ պաշտպանում էր ռեոլյուցիոն մարքսիզմի թեորիական հիմքերն ու պրոլետարիատի ռեոլյուցիոն դասակարգային պայքարի խնդիրները²:

Այս թերթի բոլոր հրատարակություններն էլ լեզվով միայն տարբեր, իրենց գործունեության բնույթով ու բովանդակությամբ նույն — լենինյան իսկրայական դիրքավորումն ունենին, որովհետև հրատարակվում էին ընկեր Ստալինի անմիջական ղեկավարությամբ²:

¹ Լ. Պ. Բերիա, «Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունների պատմ. հարցի շուրջը», էջ 65:

² Ընկեր Ստալինի Երկերի 1-ին հատորի ծանոթագրություններում ասված է. «Պրոլետարիատիս բրձուլան» «Բրձուլա» թերթի հաջորդն էր. ՌՍԴԲՊ կոմկասյան Միության առաջին համագումարը որոշեց «Բրձուլա» թերթի հետ միացնել հայերեն սոցիալ-դեմոկրատական «Պրոլետարիատ» թերթը՝ դարձնելով մեկ ընդհանուր օրգան, որ հրատարակվում էր երեք լեզվով՝ վրացերեն («Պրոլետարիատիս բրձուլա»), հայերեն («Պրոլետարիատի կռիվ») և ռուսերեն («Բորբա պրոլետարիատա»): Թերթի բովանդակությունը բոլոր երեք լեզուներով էլ նույնն էր: Համաբնիկ կարգը պահպանվում էր տվյալ լեզվով նախընթաց հրատարակությունից» (Ի. Վ. Ստալին, Երկեր, հատ. 1-ին, էջ 447):

Հայերեն «Պրոլետարիատի կռիվն» էլ, ինչպես վրացական «Պրոլետարիատիս բրձուլա» թերթը, հասառուսաստանյան սոցիալ-դեմոկրատական շարժման տեղական օրգանն էր, որ պաշտպանում էր անդրկովկասյան բազմազգի պրոլետարիատի ռևոլյուցիոն պայքարի անխզելի կապն ամբողջ Ռուսաստանի բանվոր դասակարգի մղած ռևոլյուցիոն պայքարի հետ:

Ռևոլյուցիոն մարքսիզմի գաղափարների լայն քաղաքական ազդեցության ու պրոպագանդայի հիման վրա միասնական ռևոլյուցիոն պարտիա կազմակերպելու վերաբերյալ «Իսկրա» թերթի գաղափարը, ինչպես «Բրձուլա»-ի, նույնպես և «Պրոլետարիատի կռիվ» թերթի ղեկավար սկզբունքն էր: Այս թերթի բոլոր երեք հրատարակություններում էլ միաժամանակ տպագրվել են Վ. Ի. Լենինի և Ի. Վ. Ստալինի մի շարք հոդվածները, ըստ որում Լենինի հոդվածները արտատպվում էին «Искра»-ից «Вперед»-ից, ու «Пролетарий»-ից:

Թե՛ «Պրոլետարիատ»-ը և թե՛ «Պրոլետարիատի կռիվը» կարևոր նշանակություն էին տալիս նաև գեղարվեստական խոսքին: Նրանց էջերում տպվել են ռևոլյուցիոն բովանդակությամբ մի շարք բանաստեղծություններ, թե՛ ինքնուրույն և թե՛ թարգմանական:

6

Պրոլետարական գրականության գաղափարական բովանդակության մեջ միահյուսված կերպով արտացոլվում են թե՛ պրոլետարիատի ռևոլյուցիոն շարժումը, նրա դասակարգային պայքարը կապիտալիզմի, ամեն տեսակ ճնշման ու շահագործման դեմ և թե՛ սոցիալիզմի իրականացման հեռանկարը:

Մարքսիզմի ու նրա հետագա զարգացման բարձրագույն էտապը հանդիսացող Լենինիզմի պատմական մեծ ծառայությունն այն է, որ նա սոցիալիզմի-կոմունիզմի գաղափարը միացրեց պրոլետարիատի դասակարգային շարժման հետ: Այդպիսով սոցիալիզմը, կոմունիզմը ուտոպիայից դարձավ գիտություն, բանվորական ռևոլյուցիոն շարժման ուղեցույց ծրագիրը:

Ռեալիստական ճշմարտացիությամբ արտացոլելով իրականությունը, բանվոր դասակարգի կյանքն ու պայքարը, բուրժուական հասարակությանը բնորոշ սոցիալական հակամարտություններն ու հասարակության ռևոլյուցիոն վերափոխման ուղիները, դրանով իսկ պրոլետարական գրողն իր ստեղծագործության մեջ անդրադարձնում է բանվորական շարժման ու սոցիալիզմի գաղափարի միասնությունը: Գրողը տեսնում է այդ միասնությունը իրականության մեջ և վերապրում է այն՝ ստեղծագործական ներշնչում ստանալով նրանից:

Հակոբյանի, որպես պրոլետարական ռևոլյուցիայի երգչի ստեղծագործության մեջ բանվորական շարժման ու սոցիալիզմի գաղափարի միացման արձագանքը տեսնում ենք հատկապես 1905 թվականից: Առաջին անգամ առ տարվա ընթացքում գրված բանաստեղծություններում է արտահայտված բուրժուական հասարակության ռևոլյուցիոն վերափոխման գաղափարը՝ սոցիալիզմի իրականացման, այսինքն ամեն տեսակ ճնշման ու շահագործման վերացման հեռանկարով, որպես պրոլետարիատի դասակարգային պայքարի հիմնական նպատակի:

1905 թվականի հունվարյան արյունոտ դեպքերից հետո գրված բանաստեղծություններում Հակոբյանի պոեզիայի գլխավոր հերոսը դառնում է՝ ցարական բռնության ու կապիտալիստական շահագործման սխտեմի դեմ կռվող

բանվորը, որի լիրիկական ու ռեոլյուցիոն էպիկական կերպարը բանաստեղծը գծագրում և իմաստավորում է պրոլետարիատի հաղթանակի հեռանկարով:

Առաջին անգամ այդ ժամանակվանից և առաջին անգամ Հակոբյանի ռեոլյուցիոն ստեղծագործական տաղանդի շնորհիվ հայ գրականության մեջ մուտք է գործում բանվորի կերպարը, որպես հասարակության առաջընթացը մարմնավորող և աշխատավոր մարդկության ապագան կրող սոցիալական ուժի արտահայտիչ:

«Պրոլետարիատի կռիվ» թերթը գրող-բանաստեղծ աշխատակիցներ շուներ, բացառությամբ Հ. Հակոբյանի, որի աշխատակցությունը արտահայտվել է մի ինքնուրույն բանաստեղծությամբ և մի քանի հոգևածների թարգմանությամբ:

Հակոբյանն իր հուշերում պատմում է, որ թերթի խմբագրության մեջ իրեն ուրախությամբ են ընդունում, նախ՝ որպես թարգմանիչ հայկական սեկցիայում:

Հենց առաջին օրը նրան հանձնարարում են թարգմանելու մի փոքրիկ հոդված... և ապա մի բրոշյուր, որ կրում էր «Что такое суть войны» վերնագիրը¹:

Այնուհետև Հակոբյանը հայտնում է, որ «Պրոլետարիատի կռիվ» 1905 թ. № 6-ում տպվում է իր մի ոտանավորը՝ «Թեև բանվոր է, բայց թագավոր է» վերնագրով, որը միաժամանակ՝ թարգմանաբար տպվում է «Պրոլետարիատիս բրձուլա» և «Борьба пролетариата» թերթերում, բայց անստորագիր:

Հակոբյանը հաղորդում է, որ իր այդ ոտանավորի ռուսերեն թարգմանությունը («Хотя и рабочий, а все же властелин» վերնագրով) կատարել է Պիտերից Թիֆլիս եկած՝ բոլշևիկ էնգելը, որը Կենտրոնական Կոմիտեի անդամ էր:

Ոտանավորում պարզ, անպաճույճ, բանվորներին միանգամայն հասկանալի լեզվով ու ոճով գծագրված է դասակարգային գիտակցության եկած բանվորի կերպարը՝ ցուցադրելով ու հասարակականորեն իմաստավորելով բանվորի աշխատանքային ստեղծագործական ուժն ու հզորությունը: Բանաստեղծը բացահայտում է պրոլետարիատի ու բուրժուազիայի սոցիալական հակադրությունը՝ միաժամանակ արտահայտելով անսահման հավատ՝ կապիտալիստական ստրկության ու կեղեքման դեմ բանվորների ռեոլյուցիոն պայքարի գալիք հաղթանակի մասին՝ շահագործման ու ճնշման կարգերի խորտակման, ազատ աշխատանքի թագավորության հեռանկարով:

Ահա բանվորն իր աշխատանքում.

«Միշտ ու անընդհատ աշխատում է նա արհեստանոցում,
Մեքենաների ու կաթսաների ճիշը անողոք
Այդ խիստ պայքարում նրան չի հուզում, ոչ էլ վախեցնում,
Ու խիզախ, ազատ երգը բերանին, ողջ օրը անհոգ,
Ճախարակի մոտ քրտինք է թափում, սև մուր անընդհատ
Եվ երգերի մեջ իր ով լինելը գիտակցում հպարտ,
Թեև բանվոր է,
Բայց թագավոր է»:

¹ Գրական թանգարան, Հ. Հակոբյանի արխիվ, № 247, ինքնակենսագրական նյութեր, էջ 107 և 148:

«Ամառ ու ձմեռ աշխատում է նա, լավ գիտնալով այն,
 Որ կյանքը շարժող անիվի տերն ինքն է միայն.
 Գիտե, որ ինքն է ամեն մի իրի կյանք ու ձև տվել.
 Որ առանց շարքաշ, արդյունաբերող, աշխատող ձեռքի
 Թե արտադրության, թե կյանքի զարկը անշուշտ կանգ կառնի,—
 Թեև բանվոր է,
 Բայց թագավոր է»¹:

Երկտող ռեֆրենն ավելի է շեշտում բանաստեղծի արտահայտած հիմնական գաղափարը՝ բանվորի ստեղծագործական աշխատանքի և հասարակական-քաղաքական ուժի հղորդության գաղափարը:

Ոտանավորի երրորդ տունը պատկերում է աշխատանքի և կապիտալի հակադրությունը՝ «ճնշված, վաստակավոր», «սև աշխատանքի իրավազուրկ որդու բանվորի» և «պարագիտ, հարստահարող միլիոնատիրոջ» շահերի հակադրությունը:

Իսկ վերջին երկու տները պարունակում են տիրող կարգերի դեմ բանվորի ռևոլյուցիոն պայքարի և գալիք ազատ աշխատանքի տիրապետության, ցարիզմի ու կապիտալիզմի վերացման և հասարակության ռևոլյուցիոն վերափոխման գաղափարը:

«Բայց էլ չի տանիլ ըստրկությունը նա այդ խայտառակ,
 Կիջնի ասպարեզ կեղեքիչներին ընդդեմ, խայտառակ,
 Մի ձեռքում դրոշ, իսկ մյուսում մուրճը մեծ կռվի պատրաստ.
 ...Եվ մոտ է ընկնում, երբ բանվորության քաջամարտ ոգին
 Առյուծ շարքերով կրգնա ընդդեմ բռնակալների,
 Նա տեր կդառնա իրա արդյունքին ու աշխատանքին,
 Դատի կանչելով և ապուշ ցարին, և հարուստներին,
 «Աշխատիր ու կեր» — դառ տալով նրանց.— կարգերը երկրի
 Նրա ջանքերով, նրա արյունով հիմքից կփոխվեն,
 Թեև բանվոր է.
 Բայց թագավոր է»¹:

Հակոբյանի այս բանաստեղծությունն իր հրապարակախոսական-քաղաքական շեշտակիությամբ, հայ պրոլետարական ռևոլյուցիոն պոեզիայի ծնունդը նշանավորող ստեղծագործական մանիֆեստի նշանակություն ունի, մանավանդ այն բանի շնորհիվ, որ այն տպագրվել է Անդրկովկասի բոլշևիկյան մամուլի օրգանում՝ երեք լեզուներով:

«Կաթսավար»-ից (1904 թ.) հետո Հակոբյանի այս ոտանավորը երկրորդն է՝ գրված անմիջական բանվորական թեմայով: «Կաթսավարի» համեմատությամբ այս ոտանավորը վկայում է հեղինակի հասարակական-քաղաքական մտածողության ավելի բարձր հասունացման մասին: Ակնհայտ է, որ ավելի է վճիտացել Հակոբյանի հայացքը բանվոր դասակարգի հասարակական դրության ու դերի և նրա ռևոլյուցիոն ուժի նկատմամբ:

¹ «Պրոլետարիատի կռիվ», Թերթ, 1905, հուլիսի 1, № 6:

7

Իր ինքնակենսագրական բնույթի ձեռագրերից մեկում Հակոբյանը նկատում է, թե՝ «...ես որոշակի չեմ կարող ասել ավելի շուտ բանաստեղծ եմ եղել, թե հեղափոխական գործիչ, ո՞րն է եղել առաջինը. կարծում եմ երկուսն էլ միասին, և առաջինը, և երկրորդը»։ Ապա, քիչ հետո ավելացնում. սկսած «1905 թվականից... իմ գրական գործունեությունն ընթանում է համերաշխորեն հեղափոխական կոմունիստական գործունեության հետ շարունակ մինչ օրս. ո՞րն է գերակշռել՝ հեղափոխականը՝ գրականին, թե՞ գրականը՝ հեղափոխականին, դժվարանում եմ ասել...»¹։

Իր նախորդներից ու ժամանակակիցներից Հակոբյանը հիմնովին տարբերվում է նրանով, որ նա հավատարմորեն հետևում է ռևոլյուցիոն-դեմոկրատական պոեզիայի (Ն. Նեկրասով, Մ. Նալբանդյան) տրադիցիաներին, պոետի կոչման ժողովրդային-քաղաքացիական սկզբունքին, շարունակելով ու զարգացնելով այն իր սեփական օրինակով, լինելով և՛ քաղաքացի, և՛ պոետ միաժամանակ, ներդաշնակ միասնությամբ, անբաժանելիորեն, օրգանապես միացրած քաղաքացիականը պոետականին և պոետականը՝ քաղաքացիականին։

Ռևոլյուցիայի տարիներին Հակոբյանը պարտիական հասարակական ամենաբազմազան աշխատանքներ էր կատարում և գործով իրականացնում իր բանաստեղծական դավանանքը, որի մասին գրել է նա ռևոլյուցիայի նախօրյակին, թե՝

«Սիրում եմ կռիվ ընդդեմ բռնության,
Կռվի մեջ է լուկ իմ անդորրություն...»

Ռևոլյուցիոն պայքարի պրակտիկական դարձել է նրա տարերքը։ Նա ոչ միայն երգում էր պրոլետարիատի ու ժողովրդի պայքարն ընդդեմ բռնության, այլև ինքը մասնակցում էր այդ պայքարի կազմակերպման դժվարին գործին և ավելի շատ աշխատում էր, քան երգում, ըստ որում, ինչպես կտեսնենք, նրա երգն էլ նույն այդ կռիվն էր՝ արտահայտված բանաստեղծական խոսքով, որով եռանդ էր ներշնչում ռևոլյուցիայի մարտիկներին։ Յարական բռնության ու բուրժուազիայի դեմ մղվող կռվի մեջ էր նա գտնում իր անդորրությունը։

Բացի պարտիական կազմակերպչական և ագիտացիոն-պրոպագանդիստական աշխատանքից, Հակոբյանն ակտիվ մասնակցություն էր ունենում նաև բոլշևիկյան պարտիական մամուլի կազմակերպման գործին։

«Պրոլետարիատի կռիվ»-ից հետո, 1906 թ. ապրիլի 1-ից, Թիֆլիսում, ընկեր Ստալինի նախաձեռնությամբ, հրատարակվում է հայերեն լեզվով առաջին լեգալ բոլշևիկյան «Կայծ» լրագիրը, որի փաստական խմբագիրներն էին Ստ. Շահումյանը և Սուրեն Սպանդարյանը։ Իսկ Հակոբյանը նրանց սմե-նահավատարիմ զինակիցներից էր։ Նա «Կայծ»-ի հրատարակչական գործի ակտիվ մասնակիցներից էր, որ պրակտիկ-կազմակերպչական աշխատանք էր կատարում։

Բոլշևիկյան «Կայծ»-ի գործունեության կարևորագույն մոմենտներից է նրա մղած գաղափարական պայքարը հայկական բուրժուական նացիոնալիզմի ու «ղաշնակցություն» կոչված նացիոնալիստական, կոնտրռևոլյուցիոն

¹ Գրական թանգարան, Հ. Հակոբյանի արխիվ, ձեռագիր № 274, «Ինքնակենսագրություն»։

պարտիայի դեմ, մերկացնելով նրա «թերրիայի» ու պրակտիկայի հակաժողովրդական էությունը: Հետագայում՝ 1916 թվականին և ապա սովետական շրջանում գրած իր հոդվածներում ու հուշերում անդրադառնալով «Կայծ»-ի և նրա գաղափարական ղեկավարների գործունեության բնութագրմանը, Հակոբյանն առանձնապես նշում է թերթի գործունեության այդ մոմենտը՝ նացիոնալիզմի ու նրա հիմնական կրողը հանդիսացող ռեակցիոն դաշնակցության դեմ մղված պայքարը:

1916 թ. սեպտեմբերին Ս. Սպանդարյանի մահվան առթիվ գրած իր հոդվածում («Մի էջ Սուրենի կյանքից») Հակոբյանը վերհիշում է իր հանդիպումներն ու զրույցները Սպանդարյանի հետ այն օրերին, երբ նա դեռ չէր սկսել իր աշխատակցությունը «Կայծ»-ին: Այդ հանդիպումների ժամանակ, — գրում է Հակոբյանը, — Սպանդարյանը «միշտ և ամեն անգամ վրդովվում էր, որ թույլ ենք դիմադրում դաշնակցականներին», որ պետք է «ավելի խիզախորեն պատռել այդ «սոցիալիստներին» դիմակը ժողովրդի ու գյուղացիության առաջ»¹:

1906 թ. մայիսի կեսերից Սպանդարյանը դառնում է «Կայծ»-ի խմբագրական կոլեգիայի անգամ ու ղեկավարում է թերթի աշխատանքը: Այդ օրերին Շահումյանն էլ արդեն վերադարձել էր Ստոկհոլմյան համագումարից: «Կայծի» 13-րդ համարից (մայիսի 25, հին տ. 12) սկսած թերթի էջերում գրեթե ամեն օր միաժամանակ հանդես են գալիս Շահումյանն ու Սպանդարյանը իրենց մարտական հրապարակախոսական հոդվածներով:

Այդպիսով նրանց համատեղ խմբագրական աշխատանքի շնորհիվ վճռականորեն բարձրանում ու սրվում է գաղափարական պայքարը թերթի էջերից բուրժուական հոսանքների, այդ թվում և ռեակցիոն դաշնակցության դեմ:

8

Հակոբյանը «Կայծ»-ի միակ բանաստեղծն էր: Եվ թերթի հենց առաջին համարից սկսած հանդիպում ենք նրա պարտիական-գրական ծածկանունը (Պրուետար) և իսկական անունը կրող ինքնուրույն ու թարգմանական բանաստեղծություններին, հաճախ նույն այն համարներում, ուր տպվել են նաև Ստ. Շահումյանի ու Սուրեն Սպանդարյանի մարտական հրապարակախոսական հոդվածները:

Ահա, օրինակ, «Կայծ»-ի առաջին համարում Շահումյանի «Մեր օրգանը» ծրագրային առաջնորդող հոդվածի հետ միասին տպվել է նաև Հակոբյանի «Անուրջ» բանաստեղծությունը, որը նույնպես ծրագրային նշանակություն ունի թե պոետի ստեղծագործական կյանքի այդ ու հետագա շրջանի համար մասնավորապես, և թե հայ պրուետարական պոեզիայի համար ընդհանրապես:

Հակոբյանի «Կայծ»-ում տպված այդ ու մյուս բանաստեղծությունները և Շահումյանի ու Ս. Սպանդարյանի հոդվածներն իրենց գաղափարական բովանդակությամբ միասնական են: Հակոբյանը «Կայծ»-ի էջերում ղինակցում էր Շահումյանին ու Սպանդարյանին՝ հանդես գալով, որպես բոլշևիկյան պարտիայի զինվորը պոեզիայի բնագավառում՝ հաստատորեն կանգնած ռևոլյուցիոն պրուետարիատի պայքարի դիրքերում, ընդդեմ բուրժուական էսթետիզմի ու նացիոնալիզմի: «Կայծ»-ի առաջին համարի առաջնորդող հոդվածում Ստ. Շահումյանը գրում էր. «Մեր օրգանը պետք է լինի բերան հայ բանվորության,

¹ «Մի էջ Սուրենի կյանքից» («Պայքար», 1913, № 13):

պրոլետարական համաշխարհային բանակի այդ փոքրիկ անբաժան քնդերից մեկի: Նա պաշտպան ու արտահայտիչ պետք է լինի պրոլետարիատի վսեմ միջազգային իդեալի: Նա ընկեր և ուսուցիչ պետք է լինի բուրժուական ազգասիրական իդեոլոգիային ստրուկ եղած և այդ ստրկությունից այժմ ազատվող հայ բանվորներին: «...Մի օրգան, որ ուզում է քայլ առ քայլ հետևել ուղիուն պրոլետարիատին նրա հզոր կռվում, որ ուզում է արտահայտել և ղեկավարել այդ կռիվը, որ ուզում է լուսավորել այն փշոտ ու արյունոտ ճանապարհը, որով ընթանում է ուղիուն պրոլետարիատը» (ն. տ.):

Շահումյանի այս խոսքերում բացատրված է ոչ միայն բուլղարիկյան հայ պարբերական մամուլի, այլև հայ պրոլետարական ուղիուն գրականության առաջացման սոցիալ-տնտեսական ու գաղափարախոսական նախադրյալները և խնդիրները պրոլետարիատի ուղիուն պայքարում ընդդեմ ցարիզմի ու կապիտալիզմի:

Հայ պրոլետարական գրականությունն առաջացավ, որպես հակադրություն բուրժուական լիբերալիզմին ու բուրժուական նացիոնալիստական «հայ-րենասիրությանը», որպես պրոլետարական ինտերնացիոնալիզմի գեղարվեստական արտահայտություն, հայրենիքի ու հայրենասիրության նոր գաղափարով: Նա կոչված էր ծառայելու «պրոլետարիատի վսեմ միջազգային իդեալին», աշխատավոր ժողովրդի ազգային ու սոցիալիստական ազատագրության մեծ գործին, «լուսավորելու այն փշոտ ու արյունոտ ճանապարհը, որով ընթանում է ուղիուն պրոլետարիատը» իր ուղիուն պարտիայի գլխավորությամբ: Ակտիվ աշխատակցելով բուլղարիկյան «Կայծ»-ին, Հակոբյանն էլ ազնվորեն ու նվիրվածությամբ ծառայում էր պրոլետարիատի այդ «մեծ ու վսեմ միջազգային իդեալին»:

«Կայծ»-ի առաջին համարում տպված «Անուրջ» բանաստեղծությունը նույն այդ վսեմ իդեալի գեղարվեստական արտահայտությունն է:

«Անուրջ»-ին հետևում են այլ բանաստեղծություններ:

«Կայծ»-ի ապրիլյան համարներում տպագրվել են Հակոբյանի «Մայիս-մեկյան երգը» (№ 6) և «Ամբոխն իմ աշխարհը» (№ 9), հունիսի 4-ի համարում (№ 23) «Հեղափոխություն» նշանավոր բանաստեղծությունը: Նույն այդ համարում կարդում ենք նաև Ստ. Շահումյանի «Պլեխանովի նամակի առթիվ» և Սուրեն Սպանդարյանի «Գործազուրկների հարցը» հոդվածները: Հուլիսի 14-ի համարում՝ պրոլետարական ուղիուն պայքարի հիմնը՝ «Ինտերնացիոնալ»-ը Հակոբյանի թարգմանությամբ, նաև Ստ. Շահումյանի «Կազմակերպվեցեք» ու Սուրեն Սպանդարյանի «Սոցիալիստական դաշնակցությունը և թուրք բանվորները» հոդվածները: Իսկ հուլիսի 23-ի համարում «Վարչական-կան» ուղիուն երգը Հակոբյանի թարգմանությամբ և Ստ. Շահումյանի հոդվածը դաշնակցական «Ալիք» կոչված թերթի դեմ ու Ս. Սպանդարյանի հոդվածը նույնպես դաշնակցության դեմ: Այդ հոդվածներում մերկացվում են դաշնակցության գործունեության ունակցիոն, նացիոնալիստական էությունը ցույց տալով, որ այդ «բուրժուական կուսակցությունը, սոցիալիստական դիմակ ծածկած», բայց «ճառելով պրոլետարիատի դասակարգային շահերի մասին, ճգնում է խաբել նրան», «ենթարկում բուրժուական իդեոլոգիային»¹:

¹ Ս. Սպանդարյան, հոդվածներ, նամակներ, փաստաթղթեր, 1939, էջ 57:

«Կայծ»-ի գոյութեան վերջին մոտ երեք ամսվա ընթացքում նրա էջերում Ս. Սպանդարյանն ու Ստ. Շահումյանը տպագրում են յուրաքանչյուրն ավելի քան 30 հոդված, որոնց մի ղգալի մասն ուղղված է «դաշնակցութիւն» կոչված ռեակցիոն նացիոնալիստական պարափայլի ու նրա օրգանների («Ալիք», «Հառաջ» և այլն) դեմ:

Ստ. Շահումյանը «Կայծ»-ի էջերից էր մերկացնում նացիոնալիստ դաշնակների «մետամորֆոզները», ցույց էր տալիս, որ իր էութեամբ ու գործելակերպով «դաշնակցութիւնը, այդ հայոց ազգային բռնակալութիւնն» է, որի «սոցիալիստական փետուրները չեն կարող ծածկել ոչ ոքից» նրա «տգեղ բուրժուական կերպարանքը»¹:

Բոլշևիկյան «Կայծ»-ի էջերից էր, որ Սպանդարյանը «դաշնակցութեանը» խարանեց, որպես «հերմոֆրոդիտական կուսակցութիւն», ցույց տալով, որ այդ պարտիան բանվոր դասակարգի և հայ աշխատավոր ժողովրդի ամենակատաղի թշնամին է, հայ բուրժուազիայի կամակատարը՝ ծածկված կեղծ սոցիալիստական դիմակով:

Ինչպես Ստ. Շահումյանի, նույնպես և Ս. Սպանդարյանի հոդվածները «Կայծ»-ում, ապա և բոլշևիկյան «Նոր խոսք»-ում, կարևոր, կարելի է ասել՝ բախտորոշ նշանակութիւն են ունեցել նաև Հ. Հակոբյանի համար: «Կայծ»-ում տպված իր հոդվածներից մեկում Ստ. Շահումյանը նշում էր, որ «ռևոլյուցիոն շարժումը մի քանի տարվա ընթացքում մարդկանց քաղաքական գիտակցութիւնը զարգացնելու տեսակետից անում է այն, ինչ որ կյանքի խաղաղ, նորմալ ընթացքը կարող է անել տառնյակ տարիների ընթացքում»²:

Անդրկովկասի և Ռուսաստանի բանվորական ռևոլյուցիոն շարժումն ու նրա գաղափարական արտահայտիչը հանդիսացող ռևոլյուցիոն սոցիալ-դեմոկրատական, բոլշևիկյան մամուլը՝ բառացիորեն մի քանի տարվա ընթացքում (1903—1906 թթ.) հիմնովին վերափոխեցին Հակոբյանի քաղաքական գիտակցութիւնը, նրա աշխարհայացքը: Նախառևոլյուցիոն դեմոկրատիզմից (լիբերալիզմի ղգալի ազդեցութեամբ հանդերձ) Հակոբյանը անցում ու թոխչք էր կատարում պրոլետարական, ռևոլյուցիոն սոցիալ-դեմոկրատիզմի ու ինտերնացիոնալիզմի դիրքերը:

Եվ այնուհետև, ռուսական առաջին ռևոլյուցիայի օրերից սկսած, Հակոբյանի ստեղծագործութիւնն անընդհատ ուղեկցում է ռևոլյուցիայի ընթացքին, հանդիսանալով Լենինի—Ստալինի պարտիայի հերոսական պայքարի գեղարվեստական տարեգրութիւնը հայ գրականութեան պատմութեան մեջ:

Ռևոլյուցիայի տարիներին Հակոբյանը հրատարակում է իր բանաստեղծութիւնների երկու նոր ժողովածուները՝ «Աշխատանքի երգեր» (1906) և «Հեղափոխական երգեր» (1907), վերջինս Պրոլետար ծածկանունով, ՌՍԴԲ(բ)Պ Կովկասյան Միութենական Կոմիտեի հրատարակութեամբ: Եվ հենց այդ երկու գրքույկներով էլ նշանավորվում է հայ նոր ռևոլյուցիոն պրոլետարական գրական հոսանքի սկզբնավորումը:

Պրոլետարական գրականութեան ստեղծման անհրաժեշտութիւնն ու կենսունակութիւնը և զարգացման պատմական հեռանկարը հանճարեղ կերպով

¹ «Կայծ», 1906, 32, 30 V, Ստ. Շահումյան, «Դաշնակցութիւնը պրոլետարիատի դեկավար»:

² «Կայծ», 1906, 38, Ստ. Շահումյան, «Հարկավոր է շտապել»:

լուսարանէց Վ. Ի. Լենինը «Պարտիական կազմակերպությունը և պարտիական գրականությունը» (1905 թ.) նշանավոր հոդվածում: Ռեուլյուցիայի առաջնորդի այդ հանճարեղ երկը բոլշևիկների պարտիայի էսթետիկական մանիֆեստն էր, Լենինը անխնա մերկացնում ու ջախջախում է «արվեստն արվեստի համար» «թեորիայի», գրականության անպարտիականության ու ապադասակարգայնության բուրժուական քարոզների ստությունն ու «եակցիոն էությունը և ի հակադրություն այդ ամենի, հռչակում «գրականության պարտիականության սկզբունքը, — Վ. Ի. Լենինի կարենորագույն ավանդր գրականագիտության մեջ» (Ա. Ժդանով):

Հակորյանի պատմական ծառայությունն այն է, որ նա հայ գրականության մեջ առաջինը իր ստեղծագործությամբ մարմնավորեց Լենինյան «պարտիական գրականության» սկզբունքը, և դարձավ «սոցիալիստական պրոլետարիատի պարտիական գրականության» հիմնադիրը, սոցիալիզմի գարաշրջանի դրականության նախակարապետը մեզանում:

Աներեր կանգնելով Լենինի — Ստալինի փառապանծ պարտիայի նվիրական դրոշի տակ, Հակորյանը հետագա իր գործունեության ընթացքում հետևողականորեն պաշտպանեց Լենինյան այդ սկզբունքը բուրժուական նացիոնալիստների ու էսթետների կատաղի հարձակումներից, արիաբար ու աննահանջ պայքարեց հանուն պրոլետարիատի հետ. կապված գրականության, հանուն մեր օրերի սոցիալիստական ռեալիզմի գրականության, որի սկզբնավորման պայծառ էջերից է նրա մարտաշունչ ստեղծագործությունը:

Ռեուլյուցիոն պրոլետարական գրականության սկզբնավորումը հիմնիվեր խորտակում էր բուրժուական նացիոնալիստական ռեակցիոն այն «տեսությունը» թե իբր գրականությունն իրենից ներկայացնում է «ազգային միասնական հոսանք» «համազգային շահերի» արտահայտություն: Ինչպես հասարակական-անտեսական ու քաղաքական կյանքում, այնպես էլ կուլտուրայի բնագավառում, իր դասակարգային շահերի գիտակցությանը հասնող պրոլետարիատը հաստատորեն սկսեց «անջատվել» ազգից և հակադրվել ազգի իշխող ու շահագործող դասակարգերին, «պայքար հայտարարեց հայ բուրժուազիային և բուրժուաբար մտածող հայերին»¹:

Հայ պրոլետարական գրականության սկզբնավորումը գաղափարական արտահայտությունն էր իրական պատմական այն պրոցեսի, որն ինքնըստինքյան հերքում էր «համատեղ գործողության միասնական հողի» ռեակցիոն նացիոնալիստական «տեսությունը»: Եվ հենց այդ «տեսությունից» է բխում կուլտուրայի ու գրականության պատմության վերոհիշյալ «ազգային միասնական հոսանքի» կոնցեպցիան, որը նացիոնալիզմի յուրահատուկ արտահայտություններից է գրականագիտության ու պատմագիտության բնագավառում:

Բայց նացիոնալիստական այդ «տեսությունը» հերքվում է ոչ միայն պրոլետարական գրականության առաջացման ու զարգացման փաստով: Այն հերքվում է նաև անկախ այդ փաստից էլ, նախորդ դարաշրջանի ու հետագա ժամանակների գրականության ամբողջ ընթացքով: Հենց մինչև պրոլետարական դրականության առաջացումը գրականությունը չէր կարող ներկայացնել ու չէր ներկայացնում գոյություն չունեցող «համազգային շահերի» «միասնական» արտահայտություն: Մինչև այդ էլ գրականությունը ո՛չ գաղափարական ու

¹ Ի. Վ. Ստալին, Երկեր, հատ. 1, էջ 44:

պատմական բովանդակության, և ոչ էլ գրողների էսթետիկական ըմբռնումների ու ստեղծագործական մեթոդի տեսակետից միատարր միասնություն չէր ներկայացնում: Այն «երկու ազգային կուլտուրայի» գրականություն էր, իրար հակադիր պրոգրեսիվ ու ռեակցիոն հոսանքների պայքարի պրոցես, թեև միևնույն համազգային գրական լեզվով, բայց հոսանքներից յուրաքանչյուրը արտահայտում էր սոցիալական հակադիր շահեր ու ձգտումներ: Ըստ որում պրոգրեսիվ գրողներն իրենց ստեղծագործության մեջ գերազանցապես պատկերում էին սոցիալական անհավասարությունը, արտահայտում աշխատավորների սոցիալական կովի գաղափարը, նրանց սոցիալական ազատագրական ձգտումները:

Այս հարցի առնչությամբ կարևոր ենք համարում նշելու, որ մենք իդեոլոգիական բնույթի լուրջ սխալ ենք թույլ տվել Հ. Հակոբյանին վերաբերող մի այլ հոդվածում, որտեղ ասված է, թե մինչ-հոկտեմբերյան հայ պոեզիայում ու ողջ գրականության մեջ տիրապետող ոգևորիչ գաղափարը եղել է ազգային ազատագրական կովի գաղափարը¹:

Սխալն, իհարկե, ակնբախ է: Մենք անտեսել ենք նախ այն իրողությունը, որ ազգային ազատագրական պայքարի գաղափարը սոցիալական դասակարգային տարբեր երանգավորումով է արտահայտվում տարբեր հոսանքների պատկանող գրողների ստեղծագործության մեջ: Երկրորդ՝ այդ ձևակերպումով մենք անտեսել ենք տիրապետող դասակարգերի դեմ հայ ժողովրդի մղած սոցիալական պայքարի արտացոլումը մինչ-հոկտեմբերյան հայ պրոգրեսիվ, դեմոկրատական գրողների ստեղծագործություններում. մինչդեռ իս. Աբովյանից սկսած մինչև Հ. Թումանյանը ներառյալ, հայ պրոգրեսիվ ու դեմոկրատական գրականության բովանդակությունն արտացոլել է սոցիալական պայքարի գաղափարը, սերտ կերպով կապված նրա մղած ազգային-ազատագրական պայքարի հետ: Ի հակադրություն բուրժուական լիբերալիզմի, դեմոկրատական հոսանքի գրողների ստեղծագործության մեջ ազգային ազատագրության գաղափարի ելակետը ժողովրդի սոցիալական կենսական շահերի պաշտպանության գաղափարն է՝ ընդդեմ ներքին և արտաքին ճնշման ու շահագործման: Դրա ամենացայտուն արտահայտությունը ռևոլյուցիոն-դեմոկրատ Միք. Նալբանդյանի գործունեությունն է: Նալբանդյանը ռևոլյուցիոն-սոցիալ-դեմոկրատիայի նախորդն է հայ գրական ու հասարակական մտքի պատմության մեջ: Նրա գաղափարական գծի միակ հետևողական շարունակողներն ու զարգացնողները եղան բոլշևիկները՝ հանձինս Ստ. Շահումյանի, Սուրեն Սպանդարյանի, Բ. Կնունյանցի, Ա. Միկոյանի: Իսկ գրականության բնագավառում նալբանդյանական գծի հավատարիմ շարունակողը Հակոբ Հոկոբյանն է, որի ռևոլյուցիոն շրջանի ստեղծագործությամբ սկզբնավորվում է հայ պրոլետարական պրականությունը, ի հակադրություն բուրժուական նացիոնալիստական ու դեկադենտական ռեակցիոն գրականության:

¹ Աս. Ասատրյան, «Դրական-բնագաղափարական ակնարկներ», 1951, էջ 162: